16027

891.99
7-50

E 20.03

ԳՈՐՈԳԶԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՐԱՆՔԻՑ

Ց. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1888

3538

891.99
Պ-50

ՊՈՐՈՂՋԻ

1001
3407

Ց. ՊԵՑՐՈՍԵԱՆ

ԹԻՖԼԻՋ

Տպարան Մովսես Վարդանեանի

1888

Հայերեն Գրքերի Գրադարան
Հ.Ա. Публичная Библиотека
7/II-1922

Доз. Цензурою, Тифлисъ 19 Октября 1888 г.

Типографія М. Варданянца. Тройц пер. д. № 11

Ա.

Օգոստոսի վերջերն էր։

Լոյսը նոր էր ծագում. Կ. գիւղի վերայ տիրում էր խորին լռութիւն, մի քանի րոպէից յետոյ, տեղ-տեղ գիւղում կալերի մօտ, խշխշոցի ձայներ էր լսվում. այդ գիւղացի պառաւ կանայք էին, որոնք սովորաբար վաղ էին զարդում իրենց հաշանին նայելու։

Հեռուից լսվում էր սայլերի ճռճռոցը, որի հետ խառնուելով հոտաղների հորոլան՝ խոր տպաւորութիւն էր թողնում լսողի վերայ։

Արեգակի կարմիր դէմքն երևաց և ահա գիւղի մէջ ամեն մէկի կալից ձայներ էր լսվում, բոլորեքեան զարդել—աշխատում էին։

Ոմանք սայլերով բերած խուրձն դէզ էին դնում, ոմանք դէզերից խուրձ թափում—կալում, կեմները կտրտում ու քրքրում, ոմանք իրիկուանից մնացած թեղերն էին քամում և միւս կողմից շատարարում ու խզու�ջոկում։

Միւսներն արդէն ցորեանն խտակել, խաներով չափել, հորերն են ածում. մի քանիսը դեռ դարմանը հալում-մարդն ածում, կալերն խտակում, դարմանի ու հասկի տեղը պատրաստում. կային և այնպիսիքն, որ կասածն էին հալում ու թեղեր կիտում, տակի մնացած ցորեանն աւելում ու թեղի վերայ անում։

Մի քանիսների թեղն պատրաստ էր, կալը վրա արած, դարմանը հալած, միայն վիզները ծռած քամու էին սպասում, որ թեղը քամեն ու ամեն ինչ տեղաւորեն, կալի մէջ նորից խուրձերով լցնեն։

Շատերի կալերն պատրաստ էր, խուրձը քրքրած, կամները դարսած, աչքերն կթած եզներին էին սպասում, ուշացան, կալնորդն քնով է ընկել։

Սիրուն-Նանի կալնորդն էլ էր երևի քնել, որովհետև արեգակը «մի չուան բարձրացել էր», բայց նրա եզներն չէին եկել թէև նրա կալումն ոչ հասկ կար և ոչ դէզեր ունէր, նրա հաշանը մնացած էր հանդումն, նրա արտերից շատերը ոտի վերայ չորացել էին չը հնձելու պատճառով, շատերն էլ խակ-խակ հնձել ու շուտ տասնեակ էին դրել, առանց թոյլ տալու մի քանի օր «խրձան մէջ» մնալու, հէնց դրա համար էլ ալրուել-փչացել էին, այնպէս որ սայլերը բեռնելիս, կեմներն կտրտվում, հասկերն թափվում, չոր կոթերն էին մնում, նրա արտերից շատերն էլ հէնց «բռումն» էին մնացել, առանց խուրձ կապելու։

Սիրուն-Նանը Կ. գիւղի համփայ օջաղի որդի էր և պըսակուած էր նոյն գիւղացի և գիւղի տանուտէր Դաւթի վերայ։

Նա փոքր հասակում այնքան գեղեցիկ էր, որ «սիրուն» անունը տուին, իսկ երբ մեծացաւ, իւր անչափ ողորմածութեան համար, «նան» անունն էլ աւելացրին, որ նշանակում է մայր, այնուհետև մինչև հիմա էլ կոչվում է Սիրուն-Նան։

Յուլիսի սկզբներում մեռաւ Դաւթի քոխվէն, թողեց միայնակ Սիրուն-Նանին և միակ որդուն Մինասին 14 տարեկան հասակում։

Դաւթի քոխվեն և Սիրուն-Նանը Մինասին չեն թողել որ կժիցը ջուր ածէ խմելու, կամ մի բոպէ կաման վերայ նստելու, քշելու եզները, որպէսզի արևը չայրէ նրան. նրան

շատ քնքոյշ էին պահում, որովհետև «աչքի սև ու սպիտակն էր, միակ մխիթարութիւնն էր, նա տասնևչորս տարեկան էր ահա, բայց ոչ չթի, ոչ գուլթանի հորից չէր քշել և ոչ հաց տարել նրանց համար, բայց Դաւթի քոխվի մահից յետոյ թուվհակացաւ Մինասը. Սիրուն-Նանը ճարահատեալ ամեն տեղ նրան էր քաշ տալի, գիւղացիք այլևս չէին պատվում նրան, որովհետև Դաւթի քոխվէն չը կար, իրաւունքը կորած էր, այժմ ամեն մէկը ցանկանում էր իւր վրէժն առնել Դաւթի քոխվի ընտանիքից, որովհետև նրան, քոխվին ձեռը չէր հասնում, ում որ «չոռ» էր ասել, հիմա նրանից յետոյ նրա որդի Մինասին «չոռ ու ցաւ» են ասում։

Այժմ Մինասը ոտերը քարէ-քար տալով, ուլախն հանդն էր տանում ու գիշերն հանդումն քնում, որ առաւոտը վաղ ուլախն հասցնէ օրան կրելու համար։

Սիրուն-Նանը նստած էր կալի մէջ տեղն, դարմանի վերայ և աչքը արտասուքով լի, սպասում էր Մինասին, նա ամեն հանդից եկողի դառնում էր հետևեալ խօսքերով. «ձեզ մատաղ, իմ Մինասին չէք տեսել . . . բայց ամենքն էլ բացասական պատասխան էին տալիս։

Սիրուն-Նանի համար բոպէները տարի էր դառնում, Ինչ անէր, նա ինքը չէ կարող հանդը գնալ, ուրիշին էլ չէր կարող ուղարկել, ով կերթար.—ոչ ոք, այդ այն ամիսն է, որ գիւղացին երկու ձեռն ունի երկուսն էլ փոխ է առնում, օգոստոսը գիւղացու մեռնելու—ապրելու ամիսն է, ինչպէս գիւղացին ինքն է ասում։

Նրա չարչարանքը միայն գիւղում չէ, նա ս ա ր էլ ունի, ամառն գիւղացու կէսը սարումն է։

Բ.

Երջանիկ է գիւղացին այդ ամսում, նրան յայտնի է իւր աշխատանքի արդիւնքը, չափը, նրան յայտնի է իւր ունեցած չունեցածը։

Նա, ուրախ ժպիտը երեսին, նայում է իւր կեռ-կեռ դիզաններին. նայում է ցորնալից թեղին և փառք տալով Աստուծոյ հորսելին ձեռն առած, քամում ու կիտում—պարզում է ցորեանը. նա չէ յոգնում շատ աշխատելուց, ինքն իրեն խրախուսելով ոյժ է տալիս բազուկներին։

Հանգիստ չէ և նրա ծերունի հայրը. նա եզանը ձեռն առած հասկերն դէպի կալն է անում, նա ամենի վրա էլ իրաւունք ունի, նրան պատվում են ամենքը։

Իսկ գիւղացու մայրն տան տէրն է, ջահրան առաջն դրած բուրդ է գզում, որ իւր հոտաղների, նոքար—բեքարների համար չուխացու պատրաստէ. իսկ ջուրը բերողն, կալը քշողն ու եղողն, ալիւրն մաղողն ու խմոր հունցողն է նրա աղջիկը։

Իսկ կինը նրա.—կինը սարումն է, նա այնտեղ դառը քրտինք է թափում։

Մի կողմից կարկուտը թափվում է, տաւարը բառաչելով փախչում է այս ու այն կողմն. բայց քաջ գիւղացու կինը «ունգլուկը» կապած, կռները վերքաշած, կթում է կովերը, որպէս զի մածուն հասցնէ իւր ամուսնուն՝ արևից այրուած մարդուն։ Ոչ մի մարդ հանդստութիւն չունի սարումն, հովիւն էլ է շփոթուած, նրա արխաջն էլ ցեխացաւ, տեղափոխվում է ուրիշ տեղ, բայց ինչ, ահա մթնեց, ամպը որոտում է, գայլը մի կողմից ընկնում է ոչխարի մէջ, ոչխարն էլ արխաջին սովոր չէ, շները միմեանց ջարդում են, հայ էս կողմն, հայ էն կողմն, ոտաբաց, դողացնելով, վազում է սրսթալով կտրկան եղած ոչխարի յետևից։ Ինչու,—որ

աշնանը չթի ժամանակ պանիր ունենայ, տակի թաղիքի համար բուրդ ունենայ։ Զարչարվում է իրաւ գիւղացին, բայց նրա չարչարանքը ուրախութիւն է կարծէք։

Կալը քամեց, դարմանը հալեց, ցորեանը շատարարեց, խրձիցը ջոկեց, թի տուեց—մաքրեց, խաներով չափեց, ջուալներ ու հորեր, ամբարներ լցրեց և թեք է ընկնում ու մի կուշտ քնում։

Իսկ սարումն կինը կովերը կթեց, կաթն տաքացրեց—մերեց, խնոցին հարեց իւղ պատրաստեց, պանիր շինեց ջիլզէն ածեց, ուրախ-ուրախ իլիկն ձեռն առած, կուժն ուսած ջուրն է գնում, կարծէք նա չէր, որ կարկուտի տակն դողում էր։

Լուսացաւ ծէգը բացուեց, հովիւն ոչխարները հաւաքեց քշեց դէպի ջուրն, ինքն էլ «կ՚ռռ հոо,» անելով մի կուշտ ջուր խմեց և «օխա՛յ» ասեց, ապա շվշվացնելով ջոմբաղն սուսն առած ոչխարն քշեց դէպի արօտատեղին։

Գ.

Ներողութիւն. վերադառնանք մեր պատմութեան։

Ի՞նչ պատահեց արդեօք Մինասի հետ, ինչու չէ վերադառնում։ Մինասը առաւօտը վաղ վերկացաւ, աչքերն աղաղելով նայեց այս ու այն կողմն, միայն ոչինչ չը գտաւ. նա մտածեց, մտածեց և վճռեց բարձրանալ օդունդաղ սարի գլուխն նայելու այս և այն կողմն, գուցէ կերևան եղները։

Նա այնպէս էլ արաւ, բարձրացաւ, բայց ինչ տեսաւ. իրենց եղներն արդէն արածում էին ղորողումն. ահ նա սառուռ զգաց մարմնի մէջ, երբ յիշեց որ ղորողչին Սարօն է, բայց կրկին սիրտ առաւ մտածելով թէ՝ «գուցէ մեր եղները չեն և գուցէ մինչև այնտեղ հասնելը մեր եղները կը գըտ-

նեմ, կամ Սարօն այնտեղ չի լինիլ ծածուկ կը քշեմ կը տանեմ տուն»,—այսպէս մտածելով, Մինասն ճանապարհ ընկաւ դէպի ղորոցը։

Կ. դիւղի ղորոցչին գիժ-Սարօն էր, յաղթանդամ, կրակոտ աչքերով, լայն թիկունքով մօտ 35 տարեկան մի մարդ, որի հագինը մի քրքրուած չոխայ էր, գլխաբաց ու ոտաբաց և մի մեծ թոկ կապած մէջքին, մի երկայն ու հաստ փայտ էլ ձեռքին։

Սարօն վազուց էր նկատել Դաւիթ քոխվի եզներին և ուրախութեանն չափ չը կար, նա մի լաւ կը ջարդէր ձեռների քորը կը կտրացնէր և մի քանի խան էլ ցորեան կը խլէր եզնատիրոջից։

Իսկ Մինասը ուրախ էր որ գտաւ եզները և աշխատում էր քանի որ ղորոցչին չէ երևում, գնայ շուտով դուրս անէ եզները։

Սարօն շուտ հասաւ եզներին, խեղճ եզները անգամ ճանաչում էին նրան, երևի կերել էին նրա հարուածները, որ տեսնելով նրան խրտնեցին ու փախան։

Սարօն վազում էր նրանց յետևից և սրտանց յիշոցներ էր, որ թափում էր նրանց տիրոջ գլխին։

Հասաւ նրանց յետևիցը և մի քանի անգամ լորխելուց (խփելուց) յետոյ, տարաւ արաւ Ուհանանց գոմն, որը գտնվում էր հէնց ղորոցի մէջ։

Սարօի, կատաղած բոպէներում հասաւ Մինասը։

—Բարի աջողում Սարօ-ապէր, ասաց Մինասը դողդոջոյն ձայնով։

—Այ, ա՛յ կրակը քե՛զ—գոռաց Սարօն։

—Լաւ էլ ինչո՞ւ համար ես գոռում, բողազդ պատռում, վախենում ե՞ս թէ վախեցնում. փորդ կուշտացել է հա՛. մտքիցդ ընկել է որ տարենը չորս անգամ հայրս քեզ ջարդում ու գոմն էր գցում. ինչո՞ւ ես եզները դոմն արել, ա-

սա՛ հը—ասում էր Մինասը բայց դողում էր ամբողջ մարմնով։

Այդ ժամանակ Սարօն աչքի տակով խեթում էր և ատամները կրճտացնում։

—Այ տղայ ինչո՞ւ չես ձայնդ կտրում, ուզում ես էնքան ծեծեմ որ տուն գնալու ճանապարհդ չը գտնե՞ս—գոռաց կատաղած Սարօն։

—Ոչ թէ ծեծել, այլ մատով անգամ տալ չես կարող, ասենք հայրս է մեռած, մայրս խօ հախիցդ կը գայ։

—Տօ էլի՛ . . . (թրխկ) էլի՛ . . . էլի՛ . . . |էլի ե՞ս հաչում, հէնց . . . հէնց գիտես թէ քո մօրիցը վախենում եմ, գոռում էր Սարօն և ամեն մի խօսքն ասելիս իւր հաստ դաղանակով խփում։

—Վա՛յ . . . վա՛յ . . . էլ չեմ ասիլ, էլ չեմ . . .

—Դէ շան նման վայր ընկիր տեղդ և մի հաչիլ, ապա թէ ո՞չ, թիքա-թիքա կանեմ, ասաց Սարօն և նստեց մօտն ընկած քարի վերայ։ Մինասին տուած հարուածներն այնպէս սաստիկ էին, որ տեղնուտեղն վայր ընկաւ. իսկ Սարօն սկսեց փնթփնթալ, «սրան տե՛ս սրա՛ն. գոռբեգոռ հայրն հոգիս հանում էր, տարենը 20 անգամ գլուխս ու արևս ջարդելով կոռ էր ուղարկում, մի ձի ունէի էլ հարաքաթ չէր մնացել մէջը։ Հա՛յ էս պրիստաւի եասաուլն է, ձիդ ուղարկի՛ր, հայ էս ղարաուլ է ձիդ ուղարկիր, հայ էս նաչալնիկի համար մարդ պէտք է ուղարկեմ, ձիդ տուր որ նաչալնիկի դռանը ղարաուլ քաշէ, հայ էս հարուստ մարդ է ու պրիստաւի բիձու թոռն է, պէտք է ձիդ ուղարկես, որ դրա բարխանեն տանի, հայ էս պօմոշնիկի հօրեղբօր փեսի քեռին է, արի գնա՛ սրան ճանապարհ գցիր, հայ էս պրիստաւի անօր քեռու թոռն է, գնա՛ ճանապարհին ղարաուլ պահէ որ գայ սաղ սալամաթ անց կենայ, հայ էս եսաուլ է ճուտ բեր, գարի բեր ձիու համար, իւղ բեր, ախպեր հոգիս հանեց էլի՛, տարենը տասներկու ամիս կնիկս տանը քաղցած,

ընկած, ես իմ ձիովն հէնց եսաուլի, պրիստաւի ու պօմոշ-
նիկի եմ ղուլլուղ անում, այդ էլ բաւական չէ, նրանց ազ-
գին, ցեղին, եօթը պորտին էլ պէտք է ղուլլուղ անեմ. այն-
քան արաւ որ ձիս ծախեցի, էլի եախես չի կարողացայ նրա-
նից թափեմ։ Հիմա մի փուչ կենդանի տղայ ունի, ուզում
է աչքերս հանէ, ինչպէս չէ Դաւիթ քոխուի տղէն է, պէտք
է ձայն չը հանեմ, այսպէս խօսելով յանկարծ գոռաց—«Հը
խօսիր է, ի՞նչ ես լալկել, գնա, գնա ասա Սարօն եղները
չի տալիս, գնա Սիրուն-նանին խաբար տար, գնա, մէջքդ
ոնց է ցաւում, գնա արաղ քսիր, կորիր աչքիցս, գնա մորդ
ասա Սարօն ինձ ծեծեց, մի լաւ ջարդ ու փշուր արաւ, մո-
նիճ—մոնիճ ածաւ, դէ կորիր է, ի՞նչ ես քառանգաճի
դրել։

Մինասի երկար լեզուն կարճացաւ, նա դողդողում էր,
էլ ոյժ չը կար տուն գնալու, մէջքին ու գլխին այնքան
տուել էր, որ կորցրել էր Մինասն ամեն ինչ։ Երկար լռու-
թիւնից յետոյ աչքերը բարձրացրեց դէպի Սարօն և խղճալի
ձայնով ասաց.

—Դէ թող եղները տանեմ տուն, հիմա մօրս աչքը
ճանապարհին է։

—«Կորիր փուչ կենդանի, էլի՞ խօսեցիր . . . էլի՞ . . .
(թրախկ) . . . գնա, գնա տուն թէ մեռնել չես ուզում։

—«Դէ թող, 'ի սէր Աստուծոյ, ասում էր հեկեկալով
Մինասը։

—«Ասում եմ կորիր, թէ մեռնել չես ուզում, գոռում
էր Սարօն։

—«Մայրս մեղք է, խղճա գոնէ նրան, միտդ բեր էն
օրը, որ հայրս քեզ բանտարկել էր մեր սենեակումն, ես
քեզ մօրս ասելով հաց տուի հօրիցս ծածուկ, թող . . .

—«Ձայնդ կորիր անպիտան, մի մտաբերիր ինձ այն
օրերը, քո հօր տուած պատիժնէրը . . . կորիր, կ'սպա-

նեմ. . . դու իմ ծեծիս տակն կը սատակիս, կորիր, ես քեզ
եզը չեմ տալու, կորիր ասում եմ քեզ է . . .

—«Դէ թող, Սարօ, եզները, թող, խղճա, մեր խուրձը
չոլումը մնաց, թող ի սէր Աստուծոյ . . . թող . . . թող . . .

—Ա՜խ . . . կորիր, ասում եմ քեզ կորիր . . . դու
ինձ չարացնում ես, դու . . . (թրախկ) . . . դու . . .
դու . . .

Մինասը ընկաւ գետին, Սարօի փայտն դիպաւ նրա
քներակին։ Մինասը վայր ընկաւ ուշաթափ։

—«Դէ մեռիր անզգամ—ասաց Սարօն և նստեց տեղն։
Մինասը անշարժ էր, նա լռել էր թէ մեռել՝ Սարօն չը գի-
տէր. բայց մի քանի րոպէից յետոյ մօտեցաւ Մինասին ա-
սելով—«Հը սատանամեռուկ մի տալ. վեր կաց կորիր,
ոչինչ չի օգնիլ, եզները չեմ տալ . . . գնա է . . . դէ
կորիր է, ասաց գոռալով Սարօն և աքացի խփեց . . . բայց
ձայն չը կար, Մինասը մեռած էր։

Սարօն մնաց շուարած, «վա՜հ մեռած է» ասաց նա ձածր
խեղտուող ձայնով. փախչէր, ո՞ւր, եզները քշեր տանէր տո՞ւն.
ի՞նչ անէր, մի քանի րոպէ մնաց կանգնած. վերջապէս ուշքի
եկաւ և ձեռն ու ոտն դողդողալով փորեց Ուհանանց փէին
և Մինասին հէնց շորերով թաղեց նրա մէջ։ Մինասիցն ա-
զատուեց. բայց ձեռն ու ոտն դեռ դողում էր. «ի՞նչ անեմ Տէր
Աստուած, ո՞ւր կորչեմ» ասում էր Սարօն։ Նա առանց եր-
կար մտածելու մեքենաբար վազում էր դէպի գիւղն, դէ-
պի տուն։

—«Ի՞նչ է պատահել Սարօ, ի՞նչու ես վազում այդպէս
շփոթուած հարցնում էին նրան ճանապարհին պատահող-
ները։

—«Աթաբէգանց Մինասին Այրմները սպանել են և եզ-
ներն փախցրել, ասում էր կմկմալով Սարօն և առաջ վա-
զում, առանց կանգ առնելու։

—«Ա՛յ տղայ մի սպասի՛ր տեսնենք այդ ի՞նչ Այրմներ են որ այս օրը ցերեկով, եզներ են տանում ու մարդ էլ սպանում, աղաղակում էին անցորդները. բայց երկրորդ հարցին պատասխան չ՝կար։

Սարօն հասաւ Ամթաբէգանց տուն, Սիրուն-նանը որ սպասում էր և ամեն մէկին հարցնում Մինասից՝ առաջին հարցն եղաւ—«Մինասիս չէ՞ս տեսել Սարո—ջան»,—Նանի-ջան Մինասին Այրմները սպանել են, եզներն էլ տարել—պատասխանեց Սարօն ու դեռ չէր վերջացրել իւր խօսքը, որ Սիրուն-նանը մի աղաղակ հանելով գլորուեց գետին։

Վազեցին հարևանները և մի քանի րոպէում, ամբողջ գիւղն դղրդաց։

Բոլորը կալ, մարագ թողած վազում էին դէպի Ամթաբէգանց տուն ու հարցուփորձ անում Սարօին։ Հասաւ և Օսէփ-քոխվէն և սկսեց հարցուփորձը.

—«Քեզ այդ ով ասաց Սարո, դու ինքդ տեսա՞ր։

—«Չէ՛ քոխվայ-ջան, ինձ մի թուրք ասաց Այրմները մի երեխայի չարչարում էին թէ եզները խլեն, նրա ասած նշաններից երևաց որ Մինասը պէտք է լինի, ասաց կարմրած վռշնած Սարօն։

—«Բաս դու ի՞նչ գիտես թէ սպանել են և ո՞վ էր այդ թուրքը, ո՞ր գիւղացի էր, դու նրան ճանաչում ե՞ս։

—«Հա քոխվայ-ջան ճանաչում եմ, նա Ի. գիւղացի է։

—«Դէ՛ տղայք ձիաւորուեցէք ճանապարհները կապեցէք, այս րոպէիս, գտէք, յետքը տարէք եզների, շո՛ւտ, շո՛ւտ. հրամայեց քոխվէն և ահա՛ մի քանի րոպէից յետոյ, շրջապատեցին քոխվին 25 զրահաւորուած երիտասարդներ Կ. գիւղացի, որ ամբողջ Ղազախ գաւառը դղրդացնում են։ Կ. գիւղացի երիտասարդներ, որոնց պատասխանը աւազակ թուրքին թէ՝ Կ. գիւղացի եմ, բաւական էր նրան հեռանալու, որը եթէ մի այլ գիւղացու պատահէր՝ նրան սպա-

նելը մի սոխի գլուխ թռցնել էր, բայց Կ. գիւղացուն մոտենալու համար առիւծի քաջութիւն է հարկաւոր։

Մեր երիտասարդները տակն ու վրա արին Կ. գիւղի սահմանները, բայց ոչինչ չը գտան և վերադարձան դատարկ։

Գ.

Սիրուն-նանը պառկած էր անկողնում, նրա խօսքը միայն «արի՛ Մինաս ջան, արի՛ բալայ ջան, արի՛ որդի ջան, կամ ինձ էլ տար աղայ ջան» էին ուրիշ ոչինչ։

Քոխվէն Սարօից պահանջում էր այն թուրքին որ նրան ասել է, բայց Սարօն կմկմացնում էր և ոչինչ չէր պատասխանում, նա իրեն յանցաւոր էր ճանաչում, նա չը գիտէր ի՞նչ անի, նա շփոթուած էր, մանը երեխայքն անգամ նրա վերայ ծիծաղում էին—«այ փուչ կենդանի, ասա՛ Մինասին քանի անգամ հայհոյեցիր, քանի անգամ խփեցիր, որտեղ սպանեցիր»։

«Կորէ՛ք փուչ կենդանիներ», այս էր Սարօի պատասխանը։ Վերջապէս քոխվէն հրամայեց Սարօին անյապաղ ներկայացնել թուրքին, հակառակ դէպքում սպառնում էր մատնել դատաստանի ձեռքը նրան յանցաւոր ճանաչելով։

—«Օսէփ-ապէր, հեռու է այդ գիւղն ինչպէս դուք գիտէք. դէ՛ մի ձի տուէք որ գնամ բերեմ նրան։ Իսկոյն կատարուեց Սարօի խնդիրը և ձի տալով նրան, ճանապարհ դրին։

Սարօն գնաց ու գնաց. նրա իզն ու թոզն չերևաց, անցաւ երկու օր, Սարօն չը կար։

Սկսան նրա յետևից մարդիկ ուղարկել նրան փնտռելու, բայց ի զուր. թող Սարօին փնտռեն մենք վերադառնանք։

Սարօի հեռանալովն ղորոցն պահող չը կար, կալնորդները առանց երկիւղի արածեցնում էին, այլ ևս Սարօն չը կար որ նրանց ծեծէր, մոնիճ-մոնիճ ածէր, մղկտացնէր։

Ե.

Սարօի հեռանալուց տասն օր անցել էր։

Ուհանանց Վերանը ոչխարը թեքել էր դէպի իրանց գոմերը, իսկ իրենց թուրք ծառայ Օսմանին ուղարկել էր «օլաջաղը [1]) խտակելու, գոմերը քերելու, այդ երեկոյ պէտք է խորոված անէր։ Վերանն նստել էր քարի վերայ, որտեղից երևում էր բոլոր սուրուն և շուին ձեռն առած քաղցր ածում էր, իսկ նրա շները Մուրին ու Բասարը, Թոփլանն ու Հասարը, Ուռուշն ու Ղափլանը, Ղարաշ-Սլլաշը շրջապատել էին և պոչերը աջ ու ձախ շարժելով կարծես նրանից կաթն էին խնդրում, երեկոյ էր քաղծած էին, բայց յանկարծ շները մի աղաղակի վերայ հաչելով վազում էին. Վերանը շվին թողեց և «հասէք հա՛ հասէք» աղաղակելով նրանց յետևից վազեց։

Այդ Օսմանն էր որ շներին աղաղակում—կանչում էր։

Արի՛ Վերան, արի՛, շուտ գոռում—գոչում էր Օսմանը։ Վերանը կատաղեց շների վերայ, նա յետ կանչեց շներին և հրամայեց գնալ ոչխարի մօտ. շները իսկոյն հնազանդուեցին Վերանի հրամանին և յետ դարձան դէպի ոչխարը. իսկ ինքը Վերանը առաջ քայլեց դէպի Օսմանը.

Գոմի դռանը խոտը այնքան էր բարձրացել ու խտացել, որ ինչպէս գիւղացիք են ասում, կատարեալ «բռնուտ» էր, միայն երևում էր, որ ապրանք էր մտել և կոխատել էր գոմի դուռը։ Վերանը մօտեցաւ գոմի դռանը և որքան զարմացաւ տեսնելով որ Օսմանը, այդ կատաղի առիւծը, որ ոչնչից չէր վախենում, այժմ հեռու կանգնած գոմին չէ մօտենում, նա կարծում էր թէ գոմի մէջ վայրենի խոզ է մտել, դրա համար Օսմանը զզվում է մօտենալ։

[1]) Օլաջաղը փոքրիկ սենեակ է գոմի մօտ շինած հովիւների և տաւարածների համար։

Բայց մի քանի քայլ արաւ և կանգ առաւ։—«Այս ինչ գարշելի հոտ է գալիս Օսման, ի՞նչ ես կանգնել, ինչո՞ւ չես ներս մտնում,—ասելով մօտենում էր գոմին Վերանը։

—«Մօտեցի՛ր, մօտեցի՛ր, աւելի սարսափելին կը զգաս, երևի վայրենի գազաններ են ներս մտել և միմեանց հետ կռուելով սպանել են միմեանց, գուցէ հիմա էլ լինի, շներին, շներին կանչենք, կիմանան նրանք, ասաց Օսմանը և մի քանի քայլ առաջ գնաց։

Շներին չի կարելի կանչել, ոչխարներն անտէր կը մնան, մենք կամաց-կամաց առաջ գնանք և օճորքիցը մի քանի տախտակ հանենք այն ժամանակ կերևայ թէ ինչ է։

Վերանը և Օսմանը կամաց-կամաց առաջ գնացին և բացեցին աղբածակը, բայց մութն էր և ոչինչ չէին տեսնում. իսկ գարշահոտութիւնը զզվեցնում էր նրանց, այնպէս որ հազիւ-հազ նրանց յաջողուեց մի քանի տախտակներ բացել և ահա երևացին Ամթաբէգանց երկու եզները սատակած, հոտած ու որդնած։

«Ամթաբէգանց եզներն են», գոռացին երկուսն միասին. ցածրացան բացեցին դուռն և ի՞նչ. խղճուկ եզները այնքան էին պոզերով խփել դռանը դուրս գալու համար, որ նրանց պոզերն կոտրտուել էին, աչքերը դուրս թափել, նեխուել էր նրանց մարմինը և տեղ-տեղ որդերը քչքչում էին։

—«Օսման, գնա՛ գիւղն շտապի՛ր, Մինասն էլ այստեղ կը լինի, գնա՛ շուտ իմաց տուր, թող գան մեզ օգնեն կը գտնենք Մինասին։

—«Օսմանը մի վայրկեանում առանց խօսելու անյայտացաւ, իսկ Վերանը գնաց ոչխարի մօտ և քշելով թեքեց դէպի գոմի դուռն։

Զ.

Հազիւ մի ժամ էր անցել և ահա Ուհանանց գոմի դռանը հաւաքուել էին Կ, գիւղացի ծեր, երիտասարդ, տղայ, աղջիկ, գոմի դռանը տեղ չկար, փէյնի վերայ ոչինչ չէր նըկատվում, նրա վերայ խոտ չը կար բուսած, ինչպէս առաջ էր, այնպէս էլ հիմա է. ամենքն էլ Մինասին էին որոնում, բայց ի զուր. քանդեցին, քարուքանդ արին մի քանի բոպէում գոմի դռները գոռում-գոչումով, միմեանց չէին հասկանում, շփոթուել էին. բայց յանկարծ Վերանը աղաղակեց.

—«Բոլորդ էլ հեռացէք. շներին կանչեմ, նրանք կը գտնեն»—«Հա, հա», գոչեցին բոլորն և ահա բոլորեքեան քաշուեցին գոմի դռնից. իսկ Օսմանի ու Վերանի աղաղակը «Քուրթի հա—քուրթի, գտէք հա գտէք»-ը շներին ստիպում էին քանդել այս ու այն կողմն . . . Հասարը կլանչում էր և փէյնը քանդում և ահա մի բոպէի մէջն Հասարը դուրս հանեց Մինասի դիակը։

—«Եկէք գտանք Մինասին» գոռում էին Վերանն ու Սմանը, շրջապատեցին դիակին, կատաղել էին բոլորն էլ «այդ Սարօի բանն է» աղաղակում էին ամենքը։

Կատաղել էին երիտասարդներ, թէ Սարօն երևաը՝ կորկտոր կանէին։ Նրանց աւելի կատաղեցնում—մղկտեցնում էր կանանց ձայնը, նրանց լաց ու կոծը այրում-խորովում էր ամենքին, մանաւանդ Շողեր-տատի խօսքերը, որ նա Մինասին գիրկն առած գոչում էր—«Սիրուն-նան, Սիրուն-ջան, որդիդ գալիս է, բայց նա անշունչ է, նա իւր հօր գրկումն է, քեզ են կանչում, քեզ են սպասում, էլ ո՞ւր ես ապրում. կամ ինչու համար կենում, քո ուրախութիւնդ ո՞ւմնից ես սպասում, գնա, գնա, բալիդ մօտ, նա ձեռքը մեկնած ահա օգնութիւն է կանչում, գնա նրա խոցիցը համբուրիր, լիզիր, սաղացրու· գնա կաթդ քսիր նրա ճակատին, քո աչքի

լոյսին, սև ու սպիտակին, քո միակ որդուն, արի· արի Սիրուն-նան, Սիրուն-ջան, կաթդ հալալ արա բալիդ Սիրուն-ջան, նա քեզանից էլ ոչինչ չէ ուզում Սիրուն-ջան . . .

Շողեր տատի իւրաքանչիւր բառը ալեկոծում էր բոլորի արիւնը. բոլորքեան սարսուռ, ցնցումն էին զգում մարմնի մէջ։

Է.

Երրորդ օրը գիւղական պարզ եկեղեցու ձայնը ղողանջում էր և դագաղի մէջ տանում էին մայր ու որդու դիակները թաղելու, լաց ու կոծը ամեն տեղ էր, Տէր-Ուհանի քաղցր ձայնը խառնուելով զանգակի ձայնի հետ, կանանց բարակ հառաչանքը խառնուելով տղամարդիկների հաստ ձայնի հետ՝—քարից էլ կարծես արտասուք էին թափում։

Ը.

Թաղեցին Սիրուն-նանին ու Մինասին և վերադարձան. բայց դրանով չը վերջացաւ գործը։

Օսէփ քոխվէն հրամայեց ճանապարհին դեռ գիւղը չը հասած, կանգ առնել Զուրաբանց կալումն։ Նրա հրամանը անմիջապէս կատարուեց. ինքն Օսէփ քոխվէն կանգնեց մէջ տեղն, ամբոխը շրջապատեցին նրան և անհամբերութեամբ սպասում էին թէ ինչ է հրամայելու տանուտէրը։

—«Հանգաւ Աթաբէգանց օջաղը, ասաց դողդոջուն ձայնով Օսէփ քոխվէն,—մեռաւ Դաւիթ քոխվէն, որ բոլորիս համար երկար տարիների ընթացքում բացի քոխվութիւնից հայրութիւն է արել, մեռաւ և Սիրուն-նանը, որ բոլորիս համար նան էր նա. մեռաւ և [illegible]—Մինասը.

Հ.Ս.Հ. ՀԱՆՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Р. Л. Публичная Библиотека
7/XI—1922

էլ ով մնաց,—ոչ ոք։ Հիմա հաստատ գիտենք որ Ալթաբէ-գանց օջաղի հանգչելու պատճառը անիծեալ Սարօն է։

Հիմա խնդրում եմ ձեզ որ նրան անպատճառ գտնէք, ես գիտեմ որ ձեր մէջն կան մարդիկ, որ նրա տեղը գիտեն, թող չը թագցնեն, թող ասեն, թող նրանք հաստատ իմանան, որ վաղը կամ միւս օրը, միւս ղորողչին կը հետևէ նրա օրինակին, տեսնելով որ իւր նախորդը անպատիժ մնաց։ Դէհ, տղերք քրքրեցէք մեր հանդերը, սարերն ու ձորերը, անտառները և գտէք նրան. ահա այս է իմ վերջին խնդիրս։

—«Գնանք պահանջենք նրա կնոջից, նա անպատճառ կը գիտենայ իւր մարդու ուր լինելը—գոռացին մի քանի երիտասարդներ և գնացին արագ քայլերով դէպի Սարօենց տունը. նրանց հետևեց ամբոխը. հասան, բայց դուռը փակած էր, ոչ ոք չը կար։

«Կոտրատել, փշրել դռները», լսվում էր ամբոխի միջից։

Շուտով բացուեցան դռները, ներսը ոչ ոք չ՝կար, միայն ծալքի տակին ձգուած էր մի փայտանման բան, որը ծածկուած էր մի մեծ դագաթաղիքով, երիտասարդներից մէկը մեքենաբար բարձրացրեց այդ թաղիքը և ՊՆՉ. Սարօն էր նրա տակն պառկած, «գտանք» ամեն կողմից գոռացին և յարձակուեցին նրա վերայ։

Սարօն գունատուել էր, նա լուռ և մունջ նայում էր իւր շուրջն և ձայն ծպտուն չէր հանում։

Ամբոխի կատաղութեանը չափ չը կար, ուզում էին կտոր-կտոր անել «թաղել դրան էլ Մինասի ու Սիրուն-նանի հետ». գոռում էին ամենքը և եթէ Օսէփ քոխվի և ամենից յարգուած ծերունի Ադամ-պապի աղաչանք-աղերսանքն չէր եղել՝ նրան իսկոյնևեթ կը կոտորէին։

Երիտասարդների աչքերը արիւնով լցուել էր, նրանք ոչինչ չէին տեսնում, «տուէք ապէր-ջան Սարօին, թողէք մենք դրա դատաստանն անենք, թողէք, թողէք, տուէք,

տուէք մեզ», ասում էին նոքա և այս ու այն կողմն ընկնելով, ուզում էին մի անգամ գոնէ նրան հարուածեն, որ սրտերը հովանայ։

Սարօին կապեցին թոկերով և դուրս բերեցին որպէսզի բանդարկեն, իսկ կանայք արդէն դռանը կանգնած սուգ ու շիվան էին անում, դեռ նրանց բերանումն «Մինաս-ջան, Սիրուն-ջան» էր։

Սարօին դուրս բերելուն պէս, կանանց մէջ սուգ ու շիվանը սաստկացաւ, երիտասարդների արիւնը եռում էր, նրանց համբերութիւնը հատաւ, նրանք այլևս ոչ Օսէփ քոխվի աղաչանքին էին նայում և ոչ Ադամ-պապի պաղատանքին ու աղերսանքին։

Այլ ևս անկարելի էր նրանց զսպել և ահա «կոտորել դրան, կոտորել» գոռալով, մի քանի երիտասարդներ մօտենալով նրան, սրերի հարուածներն միմեանց յաջորդելով, Սարօին կտոր-կտոր արին, սպանեցին և ամեն տեղ տիրեց խորին լռութիւն։

Ամեն բան կատարուած էր։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

1. ՄՈՒԹ ԽՈՐՇԵՐԻՑ՝ գրեց Ռ. Աշիգ. . . . . 5 կ.
2. ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱՅԻ ԽԱՆԶՈՒԱԾ ՔԱՐ թարգ. Ռաշիդ 5 կ.
3. ՂՈՐՈՂՉԻ, գրեց Յ. Պետրոսեան՝. . . . . 5 կ.
4. ԱՇԸՂ-ՂԱՐԻԲԻ ՀԷՔԵԱԹԸ. . . . . 45 կ.



Ռուսերով առնողներին զիջում մ կրվինի։

16027

2013